ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2018/111

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Անտոնյանի (պետական գրանցման վկայականի N 01Ա044396):

Քննելով «Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից 19.12.2018թ. ներկայացված բողոքը (վարույթ է ընդունվել՝ 19.12.2018թ., այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/111 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 19.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Գնման առարկա է հանդիսանում սննդամթերքը:

Ի թիվս այլ Ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2018թ. ժամը 13:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացվել է որոշում Ընկերությանը 15-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ, այնուհետ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը ունեցել է 134 000 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով արձանագրվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Ընկերության հայտը մերժվել է «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերվում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմնի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող էր ձեռք բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ:

ՈՒսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմնի կողմից իրազեկված չլինելու հանգամանքով:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2018թ. ժամը 10:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:

2.Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2018թ. ժամը 10:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով Ընթացակարգի 15-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու որոշումը:

3.Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, Ընկերության տնօրենը՝ ի

դեմս Գագիկ Անտոնյանի (պետական գրանցման վկայականի N 01Ա044396), ապահովել է իր մասնակցությունը նիստին, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ի պատասխան գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 20.12.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1277743]-18 գրության՝ Պատվիրատուն 21.12.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցմանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2018/111 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2018/111 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***10.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2018թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 15-րդ չափաբաժնի մասով «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 134 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտը թիվ 15-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմնավորմամբ, որ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգը թիվ 15-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի 19.12.2018թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 21.12.2018թ. ներկայացված «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցմանը վերաբերող փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.12.2018թ. տրամադրված եզրակացությունը, 10.12.2018թ. «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների,

սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***<u>10.12.2018թ.</u>*** հայտ է ներկայացրել «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2018թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 15-րդ չափաբաժնի մասով «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 134 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտը թիվ 15-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմնավորմամբ, որ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող պարտավորություն:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգը թիվ 15-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

ԳԲՔԱ-ԱՄ-2018/111 բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, Ընկերության տնօրենն՝ ի դեմս Գագիկ Անտոնյանի, ապահովել է իր մասնակցությունը նիստին, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 10.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 10.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-

րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.12.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 134 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային

պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

Վերը նշված հանգամանքով պայմանավորված, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտը թիվ 15-րդ չափաբաժնի մասով մերժել է և Ընթացակարգը թիվ 15-րդ չափաբաժնի մասով հայտարարել է չկայացած:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընկերության 10.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 10.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակ-

ցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից 19.12.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝ մասնավորապես

1. պարտավորեցնել «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 17.12.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով կայացված՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. պարտավորեցնել «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 17.12.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով կայացված՝ Ընթացակարգի 15-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

3. պարտավորեցնել «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընկերության հայտը գնահատել բավարար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ